

Յաղթութիւն Շումնի կողմերը :

Շումնի ճանապարհը , որ Կ. Պօլս կը բերէ , խափանելու և արգիլելու նպատակաւ , Ռուսաց զօրքը Կի-Ռի-շ պողալէ կոչուած կիրճը եկած էին , Կայսերական բանակէն սոցա վերայ արիւթ թեամբ յարձակելով Ռուսաց զօրքը հալածական ցրուեցին , և բաւականի չափ կահ կարասիք առին : Եւ ՚ի վերջոյ Ռուսաց Էմիլ Իսախանովն-Գ եւ Իսախան ճայի բոլորաիբր կանգնած պատնիշներուն վերայ յարձակեցան , նախամարտիկ Մանսուրէ կոչեցեալ զօրքը երեք պատնէշ տասը թնթանօթ և այլ կազմած առին , և շատերուն յաղթելով փախստական ցրուեցին :

Ռուսաց նաւերուն Այինէ կղզին գալը :


Ռուսաց քանի մի նաւեր Այինէ կղզին նաւահանգիստը մտան և խարսխեցին , և միջի զօրքը անմիջապէս դուրս երան , որովհետեւ կղզւոյն պահապան զինարանի վերատեսուչ Էմիլ աղան Ահեօղլու կոչուած կողմերը գնացած էր , Ռուսք անդ գտնուած Իսլամ զօրքը կատորեցին , և մարտկոյններէն տասներկու հրանօթ առին , վառօթի և պաշարաց մթերանոցները հուր արկեալ այրեցին . այս եղելու թիւնը յիշեալ ազան լսելուն պէս , թէեւ նոցա վերայ դարձաւ , բայց նոքա իրենց նաւերը իջան և այն տեղէն խոյս տուին . այս եղելու թիւնը Կայսերական սահմանագլխոյն մօտ տեղ պատահած լինելով , Կ. Պօլսոյ ժողովրդոց մեծ դըրդուժ պատճառեց :

Կայսեր նուիրական դրոշով նամբայ ելլալը :

Ինչպէս յառաջագոյն գրեցինք , բոլոր Մահմէտական ժողովրդոց յայտնապէս խրախոյս եւ քաջալեր լինելու

մտօք , թագաւորը նուիրական դրոշով , որ միմիայն փառք և պարծանքն էր Իսլամաց , պատերազմի երթալու դիտաւորու թիւնը յայտնած էր , վասն որոյ Ռեպիլ եմիլ ամսոյ 5 ին երկուշաբթի օրը շքեղ և մեծ հանդիսով նուիրական դրոշը բարձեալ Րամի փաշայի ագարակը գնաց : Ուր պարտուպատշաճ դատեցաւ բոլոր նախարարաց և մեծամեծաց Գրան առաջին կերպարանքը փոխել , ուստի հրաման ըրաւ վերցընել իրենց գլխէն ՚ի հնուց սահմանեալ խոյրը (գառագ) , շալ կապել և անդրաւարտիս հագնիլ այնուհետեւ և գործոյն կարի ստիպողական եւ կարեւոր լինելուն համար , բոլոր պաշտօնեայք գիշերները իրենց տուները չերթալով միշտ Բ . Գուռը մնան , եւ այս հրամանը անմիջապէս կատարեցաւ :

(Ետրոնալիլ)



Ե Դ Ե Ս Ի Ա Յ Է Ն

Մայիս 17 ին և Յունիս 30 ին գրուած երկու նամակներ հետեւեալ լուրերն կը հաղորդեն , յորոց մին թէ եւ անցեալներն հրատարակուած էր Աղդ . լրագրաց ոմանց մէջ , բայց այս աւելի մանրամասն տեղեկագրուած լինելուն՝ կը փութամբ հաղորդել Սիօնի զգայուն ընթերցողաց :

Մայիս 17 ամսաթիւ նամակին մէջ այսպէս կը գրէ Պ . Նամակագիրն , “Ապրիլ 7 ին տեղւոյ Տաճկաց խումբը , Տէրու թեան զօրքերէն 4-5 հոգւոյ չափ շատ մը դանակոծելէ վերջը սրիկային մէկն կը յանդգնի զօրքերէն մին մտա

վաճառի արեան ճոռոռնին (1) վերայ պառկեցնելով՝ սրով խողտողելու աշխատիլ. սակայն զօրքն կը յաջողի ինքզինքը ազատել. վերջապէս ոստիկանութեան միջամտութեամբ խուովութիւնը կը դադրի : Հետեւեալ օրը դատին մէջ, աւելի քաղաքացի Տաճիկներն պաշտպանուելով զօրաց կերած փառաւոր ծեծը իրենց կը մնայ, որոյ վերայ սրտմտելով զինուորներն կառաջագրեն իրենց վրէժը լուծել. ուստի 15 հոգւոյ չափ Ապրիլ 19 ին բերելով զինեալ, խմբով կ'երթան իրենց ընկերաց գանակոծուած տեղը և անդ կը սկսին անխտիր կերպով Տաճիկ եմբատողին զարնել. աչք պէտք էր տեսնելու. փոխադր փախչողի, շատ Տաճիկներ ազատուելու համար աման աղապէն կ'աւարտէ (2) կ'ըսէին. վերջապէս եթէ այս կըռիւն ժամ մը եւս տեւէր, Տաճիկներն ալ Հայերէն վրէժ պիտի լուծէին. թէև քանի մի Հայ ալ ծեծ կերան, բայց քիչ, սակայն մեծ երկիւշով մինչեւ երեք օր ահ ու դողի մէջ էին քաղաքացիք, մինչեւ որ Մարաշէն, Հալէպէն և Շամէն պաշտօնեայներ դալով քննութիւն բացին. երկու կողմի յանցաւորներն եւս բանտարկելով խնդիրը վերջացուցին, եւ իրենց տեղերը վերագարձան. այժմ խաղաղութիւնը վերահաստատուած է եւ չորս կողմ պահապան զինուորներ կը

սպասեն, և հանդիստ եմք. փոքր Բարերարին աղատեցան Հայք :

Յունիս 30 թիւ նամակին մէջ եւս հետեւեալը կը գրէ. « Քաղաքիս մէջ զօրք չը մնաց, այժմ բոլոր Բեռլինէն ալ ուզուած են հեռագրով. Տաճիկաց բերանը եթէ նայիս, որը կ'ըսէ կ'աւարտելու լարը չե'երբէր, որը կ'ըսէ, « շնորհակալ եմք քեզի՛ք յիշեմք ձեզի՛ք » շուկայները ծեծ ուտողներն պակաս չեն, հաւատք, օրէնք, խաչ, ամենքը երկինք բարձրացած են, սր չը նախատուին :

Այս լուրերէն յայտնի կը տեսնուի թէ Եդեսիոյ մէջ Քրիստոնեայք ինչ դժուար եւ անապահով կացութեան մէջ կը գտնուին տգէտ և բարբարոս տաճիկաց երեսէն, որք չը զգարով բնաւ կառավարութեան ներկայ վտանգաւոր և փափուկ վիճակը, և չը ճանաչելով քաղաքացիութեան եւ հպատակութեան պարտիքը, եւ ոչ իսկ եղբայրութեան և մարդկութեան օրէնքը, միմիայն իրենց վայրենի եւ յախուռն կրկն անսարով Նիւիլէրիութեան և բռնութեան գարերը յետ դարձունել և անոնց մէջ գործուած աղետալի չարիքները վերանորոգել կ'ուզեն 'ի նախատինս ընդհանուր մարդկութեան, և 'ի մեծ վնաս Օսմանեան Բարեխնամ Կառավարութեան, որ իւր ներկայ տագնապալիր կացութեան մէջ անգամ իւր հպատակաց ապահովութեան և հանգստութեան մասին հարկ եղած հոգատարութիւնը զանց չընէր, և անշուշտ եմք որ գաւառներու մէջ տեղի ունեցած այս ամեն բարբարիկ և խժժական գործքերն ընդդէմ հըպատակ Քրիստոնեից՝ բոլորովին հակառակ են Բարեխնամ Տէրութեան բարեսէր կամաց. քանզի արդէն տեսնուեցաւ որ նոյն իսկ տէրութե՛ գէ՛մ ապստամբած դաւառաց մէջ, ուր ա

(1) Եդեսիոյ մէջ ոչխարներն շուկայի մէջ իւրաքանչիւր մտաւաճառ ինք կը մորթէ իւր խանութի առաջը և մի և նոյն տեղը միտը կը ծախէ. սոյն մորթուած ոչխարներու արիւնը գետնափոր սկաններու մէջ կը վաղէ իւրաքանչիւր մտաւաճառի խանութի առջև շինուած մասնաւոր փոսերէն, որոց վերայ կը մորթեն ոչխարը, նամակագրի յիշած ճոռոռնն այս է :

(2) Ահաւասիկ նախատական բառ մը, որ իբրև յատուկ մակդիր մինչև ցարգ կը գործածուի Հայոց դէմ ինչպէս Եդեսիոյ, նոյնպէս այլ շատ տեղերու մէջ :

րիւննու շտ պատերազմ կը մղուէր երկու կողմէն և ամեն ինչ տակն ու վրայ եղած էր, այս խառնակութեան մէջ անգամ երբ անկանոն զօրքերն անկարգութիւն, աւարառութիւն և բարբարոսութիւն ՚ի գործ դրին պարտելոց դէմ, խստիւ դատուեցան եւ մինչև անգամ մահուամբ պատժուողներ եղան. անշուշտ առաւել եւս Տէրութիւնը չը պիտի ներէ իւր հաւատարիմ և հանդարտաբարոյ հպատակաց կ'եղեքմանց, նախատանաց և նեղութեանց համար. այնպիսի հպատակաց, որոց իւրաքանչիւրն ևս այս նեղ միջոցին ըստ իւր կարողութե՛ն ամենայն սիրով օգնեց Տէրութեան, ոմանք դրամով և ոմանք նոյն իսկ կենօք և մահուամբ. քանզի Քրիստոնէից կամաւոր զինուորներն եւս այսօր պատերազմի դաշտին վրայ կը գտնուին Օսմանեան տէրութեան թշնամւոյն դէմ պատերազմելու. արեամբ և կենօք տէրութեան երկիրը, իրաւունքը և պատիւը պաշտպանելու :

Այս ամեն հաւատարմութեան և անձնուիրութեան փոխարէն դարձեալ նախատուիլ, զրկանք կրել եւ իբրեւ թշնամի նկատուիլ բարբարոս և տրգէտ տաճկաց կողմէն, շատ ծանր է, որուն ոչ Աստուած կը ներէ և ոչ տէրութիւնը, որ մինչ ցարդ իւր հպատակաց շնորհած արտօնութիւններէն զատ, այս քիչ միջոցին մէջ իւր նոր պատրաստելիք սահմանադրութեամբ և նոյն իսկ տաճկական լրագրաց եղբայրսիրական յօդուածոց յայտարարութեամբ, արդէն բոլոր հպատակ Քրիստոնեայները իբրեւ քաղաքացի և հետեւաբար Ռալամ ժողովրդեան հետ հաւասար իրաւանց տէր կը ճանաչէ, եւ ոչ թէ ստրուկ, ինչպէս կ'ուզեն նկատել գաւառացի վայրենամիտ մոլեռանդներն և որոց բան ու դրո՛ծ

եղած է ամեն ատեն բռնանալ Քրիստոնէից վերայ, նախատել յանիրաւի, կողոպտել, գանակոծել և մահ սպանալ. ողորմելի մարդիկ, եթէ այդքան քաջութիւն ունին իրենց սրտին մէջ, և այնքան ծարաւի են արեան, ահա պատերազմի դաշտը բաց է. թող երթան պատերազմին Տէրութեան եւ հայրենեաց թշնամւոյն դէմ և յագեցնեն իրենց արեան ծարաւը թշնամւոյն արեամբ և ոչ թէ խաղաղասէր եւ հաւատարիմ հպատակաց, որոնք թերեւս այն մոլեռանդներէն աւելի ջերմ փափաք սւնին Օսմանեան Բարեխնամ Տէրութեան զօրութեան և հաստատութեանը, իսկ մոլեռանդ և անուպա բարբարոսներն յայտնի է թէ իրենց այս խժդժական վարմունքովք մեծ վնաս և վնասդ կը հասցնեն Մեծագոր Տէրութեան, մանաւանդ ներկայիս մէջ. վասն զի Եւրոսիական տէրութիւնք ինչպէս կը տեսնուի, յայտնապէս իրենց քաղաքականութեան պատրուակ բռնելով Քրիստոնէից դէմ ՚ի գործ դրուած այս բարբարոսութիւնները, կը միջամտեն Տէրութեան ներքին գործոց և ազդեցութիւն բանեցունելով նորա վրայ այլ և այլ զբժուարութեանց մէջ կը ձգեն :

Եթէ այս օտար և անուղղակի միջամտութիւնք չը լինէին, Հերսէքի փոքրիկ և գրեթէ աննշան ապստամբութիւնն այդքան չէր երկարեր և այսքան չէր մեծանայր ու ծաւալէր որպէս ժանտախտ և այսքան հոգ ու նեղութիւն պատճառէր ընդհանուր Տաճկաստանի Ուրբմն թէ այս և թէ այլ այս տեսակ չարեաց առաջն առնելու համար ինչպէս Տէրութիւնը փորձով զգաց, ինչպէս ամեն լուսամիտ եւ խոհական Ռալամ լաւ վերահասու եղաւ և ինչպէս նոյն իսկ Պօլսոյ մէջ կարգացողաց դասն անգամ (որք խուժանէն աւելի

վերահասու են Տաճկական լիճի արև
 րամագրութեանց և սկզբանց) համու
 զուեցան թէ ամեն ազգի և կրօնի հը
 պատակաց հաւասար ազատութեամբ,
 ապահովութեամբ և միութեամբ մի
 այն կրնայ պահպանուիլ Տէրութիւնը
 եւ յառաջագիմել . այսպէս ալ պէտք
 է անպատճառ համոզուի ամեն Տաճիկ
 և իւր գաղափարն ու ընթացքը փո
 խէ, որպէս զի խաղաղութիւն և ա
 պահովութիւն տիրէ ամեն ուրեք և
 Տէրութիւնը իւր ներքին խաղաղու
 թեան և ժողովրդոց համակրութեան
 ու սիրոյն վերայ վստահ լինելով՝ իւր
 ուշադրութիւնն ու աշխատութիւնը
 ուրիշ կարեւոր գործոց վերայ դարձնէ .
 Այս մեծ պարտաւորութիւնն ալ ա
 մենէն աւելի կը ծանրանայ գաւա
 ռայ և քաղաքայ Վսեմ . Կսռավա
 րիչներուն վրայ, որք թէ Տէրութեան,
 թէ Աստուծոյ առջեւ պարտաւոր են
 իրենց յանձնուած մեծ պաշտօնը աջա
 լուրջ հսկողութեամբ, արդարութե
 ւ մեծ հոգատարութեամբ կատարել .
 թոյլ չը տալ բնաւ զրկանաց, խստիւ
 պատժել որ և է անիրաւութիւն, նա
 մանաւանդ որ ամենակարեւորն է հետ
 զհետէ ժողովրդեան մտքերը մշակել,
 համաձայնութիւն եւ սէր գոյացնել
 տիրող և հպատակ ժողովրդեան մէջ,
 որով միայն կրնան հանգստանալ եւ
 երջանիկ լինել ժողովուրդք և Տէրու
 թիւնը յառաջագիմել :



Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Ա. Պ . Խ . Ս . Խ .

Կիլիկիոյ վիճակին համար կ'ըսէք,
 «Ո՛վ չը գիտեր թէ Կիլիկիոյ հորիզոնը
 կարի տխուր տեսարան մի կ'ընծայէ

ազգասէր Հայուն » . Ճշմարիտ է բա
 րեկամ, Կիլիկիան այն օրէն, յորում
 իւր իշխանական թագն ու գաւազան
 բարձան, այն օրէն, յորում իւր թա
 գաւորական լուսավառ ջահը շիջաւ,
 սկսաւ նսեմանալ ու նուաստանալ և
 այժմ մանտուանդ իւր վերջին ճգնա
 ժամին մէջ է՝ բարոյասլէս և նիւթա
 պէս : Զարմանալի չէ այս, քանի որ
 Ազգ . Վարչական ժողովոց մէջ Կիլի
 կիան միայն իւր Կաթողիկոսական խնդ
 րով կը յիշուի, և քանի որ շահասէր
 և ազգանենդ անձինք անսպակաս են,
 Ազգին միջէն, զարմանալի չէ, որ մեծ
 վիճակներ կամ գաւառներ խաւարի
 և սգիտութեան ձեռքը մասնուած՝
 անդադար հեծեն ու հառաջեն : Գուք
 Կիլիկիոյ փրկութեան և ազատութեան
 համար ըլձակերտ կը փափագէք Լու
 սաւորչի մը իւր խաչով . մեր և ամե
 նուն հաւատն է այդ, Խաչով աղապո
 լիւն և Իրիւ-Իրիւն . բայց երբ խաչին հետ
 սուր մի ալ տեսնել կը փափագէք, հա
 ւատը կ'երկճղի . վասնզի Խաչն ու սուր
 միշտ անմիաբան են 1800 տարիէ 'ի վեր
 և պիտի մնան ցկատարած աշխարհի .
 քանի որ այլ է խաչին, և այլ՝ սուրին
 պաշտօնը . մին շինողական է, միւսն ա
 ւերիչ . մին կը լուսաւորէ, միւսը կը
 սպառէ և կը խաւարէ . մին կեցուցա
 նէ և միւսն սպանանէ : Աւելի բանա
 ւոր եւ օգտակար կ'ըլլայ Ձեր իղճը,
 եթէ գոռոզ սուրին փոխանակ խոնարհ
 գրիչ մը փափագէք խաչի պատուանդա
 նին տակ . վասն զի թուրի արիւնահոտ
 դարերն անցան . ներկայ դարը գրչինն
 է, որ խաչին հետ համապաշտօն է .
 գրչին հարուածները կենդանարար են
 եւ ո՛չ մահատու . սակայն դուք ձեր
 գրիչը գործածելէ փոքր ինչ կը վախնաք,
 ուստի կը շիտթիք և կը տատամսիք գը
 րելու համար, զի մի գուցէ խաւարի
 եւ սգիտութեան արքանեակք ձեզ